ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- --------- 2020 թվականի №---Ա

ք. Երևան

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՄԻՏԱՍԻ ՓՈՂՈՑԻ 60 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԳԱԶԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ Դիմող անձ) 2020 թվականի հոկտեմբերի 8-ի №ՊՆ035/1725 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ հայտնելով, որ համապատասխան լիցենզիա ունեցող անձի կողմից իրականացվել է Գյումրի քաղաքի Կոմիտասի փողոցի 60 հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը պատկանող տարածքի (այսուհետ՝ Բնակավայր) գազամատակարարման ցանցի և գազասպառման համակարգի նախագծման և կառուցման աշխատանքները, իսկ նշված հասցեում բնակվում են զորամասի զինծառայողների ընտանիքները: Դիմող անձը խնդրել է Հանձնաժողովի միջամտությունը բնակիչներին որպես բաժանորդ ձևակերպելու հարցում,

բ) Դիմող անձի գրությանը կից ներկայացվել է «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2020 թվականի օգոստոսի 26-ի №05-34/4169 գրությունն առ այն, որ Ընկերությունը չի առարկում Բնակավայրի գազիֆիկացման աշխատանքների սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացմանը,

և հիմք ընդունելով Հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի №95Ն որոշման 1-ին կետով հաստատված բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 10.15-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝

1) Բնակավայրը գազիֆիկացվում է Դիմող անձի դիմումի համաձայն, Ընկերության կողմից տրամադրված տեխնիկական պայմանների հիման վրա, Կանոնների 10.2 գլխում նշված առանձին բնակավայրերի գազիֆիկացման ընթացակարգով.
2) Դիմող անձը Ընկերություն է ներկայացնում կառուցված գազասպառման համակարգի (ավարտված շինարարական օբյեկտի) համար պահանջվող կատարողական տեխնիկական փաստաթղթերը.
3) Ընկերությունը ուսումնասիրում է կատարված աշխատանքների համապատասխանությունը ներկայացված փաստաթղթերին և, աշխատանքները պատշաճ կատարված լինելու դեպքում, Կանոնների 10-րդ գլխով ահմանված ընթացակարգով, կնքում է առանձին գազամատակարարման պայմանագրեր.
4) Ընկերությունն իրավունք չունի դիմող անձանցից պահանջել ներկայացնելու տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն սույն որոշմամբ կամ այլ նորմատիվ իրավական ակտերով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիմող անձին և Ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2020թ.